ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
23 հունվարի 2018 թվականի N 8-Ա

«ՄԵՂՐՈՒ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՆ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010Թ. ՕԳՈՍՏՈՍԻ 12-Ի N 158-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ 2017Թ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 141-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետով, 67-րդ հոդվածի 1-ին կետի «ա» և «է» ենթակետերով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերով, 72-րդ հոդվածի 1-ին մասով, ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 7-ի N 1586-Ն որոշման 4-րդ և 5-րդ կետերի՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության 443658960 ՀՀ դրամ կազմող կանոնադրական կապիտալն ավելացնել 1155678768 ՀՀ դրամով՝ լրացուցիչ բաժնետոմսերի թողարկման և տեղաբաշխման միջոցով: Ավելացումից հետո կանոնադրական կապիտալը սահմանել 1599337728 ՀՀ դրամ:

2. Հաստատել կանոնադրության փոփոխությունը և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2010 թվականի օգոստոսի 12-ի N 158-Ա որոշմամբ հաստատված «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 4.2 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 1599337728 (մեկ միլիարդ հինգ հարյուր իննսունինը միլիոն երեք հարյուր երեսունյոթ հազար յոթ հարյուր քսանութ) ՀՀ դրամ, որը կազմում է 304288 (երեք հարյուր չորս հազար երկու հարյուր ութսունութ) հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 5256 (հինգ հազար երկու հարյուր հիսունվեց) ՀՀ դրամ:

Ընկերության բոլոր 304288 սովորական բաժնետոմսերը տեղաբաշխված են, սեփականության իրավունքով պատկանում են Հայաստանի Հանրապետությանը և լրիվ վճարված են նրա կողմից:

Ընկերության բոլոր բաժնետոմսերը հասարակ (սովորական) են»:

3. Հանձնարարել «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենին՝ ապահովել կանոնադրության փոփոխության պետական գրանցումը ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:

4. ՈՒԺը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2017թ. դեկտեմբերի 26-ի Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալն ավելացնելու, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2010թ. օգոստոսի 12-ի N 158-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 141-Ա որոշումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Վ. ՀԱԿՈԲՅԱՆ**

2018թ. հունվարի 23
ք. Կապան

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
Սյունիքի մարզպետի 2018թվականի
հունվարի 23-ի N 8-Ա որոշմամբ
ՀՀ Սյունիքի մարզպետ՝

Վ. Հակոբյան

« » _____ 2018թ.

Կազմված է
23.01.2018թ և բաղկացած է 1 թերթից
տպագրված է ընդամենը 2 օրինակ
ՕՐԻՆԱԿ
ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ
ԿՈՂՄԻՑ 13.08.2010թ.
Վկայական 03Ա 089213
ՀՎՀՀ 0970524
13.08.2010թ. գրանցված կանոնադրության
Թիվ _____ փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի տարածքային բաժնի կողմից

_____

« » ---------- 2018թ

«ՄԵՂՐՈՒ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

/ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ/

1.«ՄԵՂՐՈՒ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

Ընկերության կանոնադրության 4.2 կետը կարդալ հետևյալ նոր խմբագրությամբ.

«Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 1599337728 (մեկ միլիարդ հինգ հարյուր իննսունինն միլիոն երեք հարյուր երեսունյոթ հազար յոթ հարյուր քսաներեք) ՀՀ դրամ, որը կազմում է 304288 (երեք հարյուր չորս հազար երկու հարյուր ութսունութ) հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 5256 (հինգ հազար երկու հարյուր հիսունվեց) ՀՀ դրամ:

Ընկերության բոլոր 304288 սովորական բաժնետոմսերը տեղաբաշխված են, սեփականության իրավունքով պատկանում են Հայաստանի Հանրապետությանը և լրիվ վճարված են նրա կողմից:

Ընկերության բոլոր բաժնետոմսերը հասարակ (սովորական) են»:

2. Սույն փոփոխությունը հանդիսանում է «ՄԵՂՐՈՒ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության (գրանցված 13.08. 2010թ.) բաղկացուցիչ մասը: